



**ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ**

**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

**ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ
(ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ)
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ք.Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ	4
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ	4
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	6
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՁԵՎ ՈՒ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	7
ԲԱԺԻՆ 7. ՀՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐ	8
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	8
ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	9
ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ	10
ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ	11
ԲԱԺԻՆ 12. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ.....	14
ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	16
ԲԱԺԻՆ 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	16

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Սնանկության (անվճարունակության) կառավարիչների մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. Սնանկության (անվճարունակության) կառավարիչների մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնների հիման վրա «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է ապահովագրության պայմանագրեր (վկայագրեր) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիրներ)՝ սնանկության կառավարիչների (այսուհետ՝ Ապահովագրված անձինք) մասնագիտական գործունեության հետևանքով սնանկության գործին մասնակցող անձանց (պարտապանին կամ պարտատիրոջը) վնասի պատճառման համար:

Ապահովագրողը և Ապահովադիրը համատեղ Կանոններում և ապահովագրության պայմանագրում կամ ապահովագրության վկայագրում (այսուհետ՝ Պայմանագիր) անվանվում են Կողմեր:

1.4. Կանոնները հանդիսանում են Պայմանագրի անքակտելի մասը, Կանոններում արտացոլված դրույթները պարտադիր են Կողմերից յուրաքանչյուրի համար և նախատեսված են Պայմանագրի բովանդակությունը պարզաբանելու կամ Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորելու համար:

1.5. Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

1.6. Պայմանագիրը համարվում է կնքված համաձայն Կանոններում նշված պայմանների, եթե Պայմանագրում ուղղակիորեն նշվում է այդ պայմանների կիրառման կամ այդ պայմանների հիման վրա Պայմանագիրը կնքելու մասին:

1.7. Եթե Պայմանագրում Ապահովագրված անձ նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովադիր, որպես սնանկության կառավարչի քաղաքացիական պատասխանատվությունը:

1.8. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց (պարտապաններ կամ պարտատերեր, սնանկության գործին օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցող անձինք), որոնք սնանկության կառավարիչների մասնագիտական գործունեության հետևանքով կրել են վնասներ և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունեն վնասի հատուցման (վերականգնման) պահանջի իրավունք:

1.9. Սնանկության կառավարչի մեղքով վնաս կրած պարտապանը կամ պարտատերը համարվում է Շահառու: Եթե մեկ դեպքի համար Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը բավարար չէ վնաս կրած բոլոր Շահառուների՝ վնասով պայմանավորված պահանջները բավարարելու համար, ապա ապահովագրական գումարը

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

բաշխվում է բոլոր շահառուների միջև՝ իրենց վնասով պայմանավորված պահանջներին համամասնորեն:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2.1. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Կանոններով նախատեսված կամ Պայմանագրում նշված պատահարի (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու դեպքում, պայմանավորված վճարի (ապահովագրավճարի) դիմաց և Պայմանագրով սահմանված գումարի (ապահովագրական գումարի, պատասխանատվության) սահմաններում, հատուցել սնանկության գործին մասնակցող անձանց (պարտապանին կամ պարտատիրոջը) սնանկության կառավարչի մասնագիտական գործունեության հետևանքով պատճառված վնասները:

2.2. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի բանավոր հայտարարության կամ Ապահովագրողի պահանջով և Ապահովագրողի կողմից սահմանված ձևով գրավոր դիմումի հիման վրա՝ նրան հանձնելով Ապահովագրողի համապատասխան լիազորված անձի կողմից վավերացված Պայմանագրի մեկ օրինակը:

2.3. Ապահովագրողն ապահովագրության մասին գրավոր կամ բանավոր հայտարարություն ստանալուց հետո իրավունք ունի Ապահովադրից պահանջել սնանկության կառավարչի (ապահովագրված անձի) լիցենզիան, ինչպես նաև այլ փաստաթղթեր ու տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են վերջինիս մասնագիտական գործունեության հետ և կազդեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների հավանականության կամ հնարավոր վնասների չափերի որոշման վրա:

2.4. Եթե Պայմանագիրը կնքելուց կամ ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո պարզվել է, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչելու Պայմանագիրը և կիրառելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներով նախատեսված հետևանքները, ինչպես նաև մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

2.5. Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

2.6. Ապահովադիրն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված տվյալների ճշտության և ամբողջականության համար:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Համաձայն Կանոնների ապահովագրության օբյեկտ են համարվում օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող սնանկության գործին մասնակից անձանց գույքային շահերը՝ կապված սնանկացման կառավարիչների մասնագիտական գործունեության արդյունքում պատճառված վնասների հետ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

4.1. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ընթացքում «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված սնանկության կառավարչի (Ապահովադրի, Ապահովագրված անձի) մասնագիտական գործունեության հետևանքով սնանկության գործին մասնակից անձանց պատճառված վնասները, որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ մտած դատական մարմինների որոշմամբ հիմք է հանդիսանում տուժած անձանց կողմից այդպիսի վնասի փոխհատուցման պահանջի համար և որի դեպքում առաջանում է Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը:

Պայմանագիրը կարող է նախատեսել ապահովագրական հատուցման վճարում առանց դատական մարմինների որոշման՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից պատահարը ապահովագրական համարելու և վնասի չափի որոշման համար Ապահովագրողի համար բավարար ապացույցների ներկայացման դեպքում:

4.2. Կանոնների համաձայն ապահովագրական պատահարներ չեն համարվում Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի (Ապահովագրված անձի) մասնագիտական գործունեության հետևանքով սնանկության գործին մասնակից անձանց պատճառված վնասները, որոնք հետևանք են՝

ա) Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ պարտապանի կամ պարտատիրոջ դիտավորության, կանխամտածված գործունեության, Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից կատարված հանցագործության, Ապահովադրի (Ապահովագրված անձի) պարտապանի կամ պարտատիրոջ հետ ունեցած նախնական պայմանավորվածության, կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ակոհիլի, թմրամիջոցների կամ տոքսիկ արբեցողության վիճակում գտնվելու ժամանակ կատարված գործողությունների կամ դրանց արդյունքների,

բ) Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից իր անունից կամ իր օգտին, իր ամուսնու, ընտանիքի անդամների (ծնողների, երեխաների, թոռների), հարազատների օգտին կատարված գործողությունների, ինչպես նաև այնպիսի գործողությունների, որոնք օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն Ապահովադիրը (Ապահովագրված անձը) իրավասու չէր կատարելու,

գ) Ապահովադրի (Ապահովագրված անձի) գործողությունների (անգործության), որոնք պայմանավորված են մասնագիտական գաղտնիքի հրապարակմամբ, այդ թվում այնպիսի տեղեկությունների հրապարակմամբ, որոնք հայտնի են դարձել մասնագիտական գործունեության իրականացման ժամանակ և օգտագործվել են սեփական նկատառումների իրագործման համար,

դ) Այն անձանց (օգնական, ստաժյոր, այլ փոխկապակցված անձ) գործողությունների (անգործության), որոնք ժամանակավորապես փոխարինում են Ապահովադրին (Ապահովագրված անձին) և իրականացնում վերջինիս ֆունկցիաները նրա բացակայության ընթացքում՝ կապված Ապահովադրի (Ապահովագրված անձի) արձակուրդի, հիվանդության կամ այլ պատճառներով իր ծառայողական պարտականությունները չկատարելու անհնարինության հետ,

ե) Ապահովադրի (Ապահովագրված անձի) ներկայացուցչի կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետ պայմանագրային հարաբերություններում չգտնվող անձի գործողությունների, որոնք օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավասու չեն դրանք կատարել:

4.3. Կանոնների համաձայն ապահովագրական պատահարներ չեն համարվում նաև սնանկության գործին մասնակից անձանց պատճառված վնասները, որոնք հետևանք են՝

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ա) Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից իրականացվող այնպիսի գործողությունների, որոնք ուղղակի ոչ մի առնչություն չունեն սնանկացման գործընթացի հետ,

բ) Ապահովագրի (Ապահովագրված անձի) մասնագիտական գործունեության հետևանքով սնանկության գործին մասնակից անձանց պատճառված բարոյական, անուղղակի վնասների կամ տուժած անձանց շահույթի կորստի հետ կապված ծախսերի,

գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան ցուցումների, հանձնարարականների, դատական վճիռների կամ որոշումների հիման վրա Ապահովագրված անձի կողմից իրականացված հարկադրական գործողությունների,

դ) պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելը,

ե) հեղինակային կամ արտոնագրված իրավունքների, ապրանքային նշանների կամ ֆիրմային անվանումների խախտման,

զ) պետական մարմինների պահանջով գույքի առգրավման, բռնագրավման կամ ոչնչացման:

4.4. Ապահովագրողի կողմից չեն փոխհատուցվում նաև սնանկության գործին մասնակցող անձանց (Շահառուների) կրած այն վնասները, որոնք ի հայտ են եկել Պայմանագրի գործողության ընթացքում, սակայն առաջացել են մինչ Պայմանագրի գործողության մեջ մտնելը սնանկացման կառավարչի կողմից կատարված որևէ գործողության կամ շարունակական գործողությունների արդյունքում:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Ապահովագրական գումարը Պայմանագրում սահմանվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ապահովագրական գումարն այն գումարն է, որի սահմաններում Ապահովագրողն ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում իրականացնում է ապահովագրական հատուցում:

5.2. Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողը կարող է սահմանել մեկ ապահովագրական պատահարով ապահովագրական հատուցման ենթակա առավելագույն չափաքանակներ (ապահովագրական գումարի ենթալիմիտներ):

5.3. Ապահովագրական հատուցում կատարելուց հետո Պայմանագիրը շարունակում է գործել մինչև Պայմանագրի գործողության ավարտը վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով պակասեցված ապահովագրական գումարի սահմաններում:

5.4. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո Ապահովագրի գրավոր կամ բանավոր դիմումի համաձայն և լրացուցիչ ապահովագրավճարի մոծմամբ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը կարող է լրացվել: Ապահովագրական գումարի լրացումը ձևակերպվում է Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԶԵՎ ՈՒ
ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

6.1. Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:

6.2. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

6.3. Վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Կանոններով և Պայմանագրով:

6.4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

6.5. Ապահովագրական գումարի լրացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է լրացուցիչ ապահովագրավճարը վճարել միանվագ կարգով: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

6.6. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

6.7. Ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝

ա) կանխիկ դրամով վճարման դեպքում Ապահովագրողի դրամարկղ դրամական միջոցների մուտքագրման կամ ներկայացուցչին հանձնման օրը,

բ) անկանխիկ վճարումների դեպքում Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը:

6.8. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.9. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.10. Եթե ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

7.1. Պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովագրողի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար :

7.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

7.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

7.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

**ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ
ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

8.1. Պայմանագիրը կարող է կնքվել Կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած ժամկետով:

8.2. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբն ու վերջը նշվում է Պայմանագրում: Ապահովագրողի ապահովագրական հատուցում կատարելու պարտականությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ համարվող ամսաթվի 00.00 ժամից մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջ համարվող ամսաթվի 24.00 ժամը:

8.3. Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում հերթական ապահովագրավճարի չմուծման կամ այն ոչ լրիվությամբ մուծման դեպքում Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը չի տարածվում այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրում նշված հերթական ապահովագրավճարի վճարման օր հանդիսացող ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00.00-ից մինչև պարտքի փաստացի վճարման օր հանդիսացող ամսաթվի ժամը 24.00-ն: Ընդ որում, եթե հերթական ապահովագրավճարը չի վճարվել Պայմանագրում նշված վճարման օր հանդիսացող ամսաթվից հաշված 10 օրացուցային օրերի ընթացքում, ապա Պայմանագրի գործողությունը դադարում է, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.4. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝

ա) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականության լրիվ ծավալով կատարման (լրիվ ապահովագրական գումարի վճարման) դեպքում: Ընդ որում ոչ մի լրացուցիչ փոխադարձ հաշվարկ Կողմերի միջև այս դեպքում այլևս չի կատարվում:

բ) եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական դեպքի տեղի ունենալու հավանականությունը կամ ապահովագրական ռիսկի գոյությունը վերացել է՝ կապված ապահովագրական պատահարով չպայմանավորված հանգամանքներ տեղի ունենալու հետ: Ընդ որում Ապահովագրողն այս դեպքում ապահովագրավճարն Ապահովագրողին վերադարձնում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրավճարի 75%-ը:

գ) օրենքով, այլ իրավական ակտերով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

8.5. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

8.6. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել նաև Ապահովադրի կամ Ապահովագրողի պահանջով, ընդ որում՝

ա) Ապահովադրի պահանջով Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն և ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

բ) Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի կամ Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70%-ը:

8.7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

8.8. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտն Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած վնասի փոխհատուցումից:

ԲԱԺԻՆ 9. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

9.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 3 օրացուցային օրվա ընթացքում, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) իրեն հայտնի դարձած նշանակալի (էական) հանգամանքների և փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

Սույն պարտականության պատշաճ կերպով կատարման փաստը պետք է հավաստվի գրավոր ապացույցներով:

9.2. Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան՝ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում:

Եթե Ապահովադիրը դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություն մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով լուծել Պայմանագիրը:

9.3. Ապահովադրի կողմից Կանոնների 9.1 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և օրենքով և

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

այլ իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում: Այս դեպքում Ապահովագրողը՝

ա) ռիսկի աստիճանի փոփոխումից հետո առաջացած ապահովագրական դեպքերի նկատմամբ վնասների փոխհատուցման համար պատասխանատվություն չի կրում,

բ) Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի չլրացած ժամկետի համար նրա կողմից մուծված ապահովագրավճարի համապատասխան մասը, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80%-ը:

9.4. Կանոնների 9.3 կետով նախատեսված հանգամանքները չեն գործում, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող գործոնները վերացել են:

**ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ)
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՂԻ
ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

10.1. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է՝

10.1.1. Կանոնների համաձայն սնանկության գործին մասնակցող անձանց պատճառված վնասի հատուցման համար տուժած անձանց կողմից իրեն կամ դատական մարմիններում հայցապահանջ ներկայացնելու դեպքում այդ մասին անհապաղ, տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին, և ոչ ուշ, քան այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո 48 ժամվա ընթացքում (չհաշված ոչ աշխատանքային օրերը) գրավոր կերպով հայտնել Ապահովագրողին:

Ապահովագրողին հայտնվող նախնական տեղեկատվությունը պետք է պարունակի հանգամանքների (դեպքի) վերաբերյալ տվյալ պահին Ապահովադրին (Ապահովագրված անձին) հայտնի հնարավոր լրիվ տեղեկատվությունը, ինչպես նաև Պայմանագրի (ապահովագրության վկայագրի) համարը:

10.1.2. Եթե իրավասու մարմինների կողմից դեպքի առնչությամբ կատարվում է հետաքննություն, քննություն կամ հարուցված է քրեական գործ, ապա այդ մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին, անկախ ապահովագրական հատուցման մասին իր կողմից տրված դիմումի:

10.1.3. Հնարավորություն տալ Ապահովագրողի ներկայացուցչին, փորձագետին կատարելու հանգամանքների և պատճառված վնասի ուսումնասիրություն և գնահատում:

10.1.4. Պարբերաբար տեղեկացնել Ապահովագրողին տեղի ունեցած դեպքի հետաքննության ընթացքի, նրա պատճառների և հետևանքների մասին, մասնակցել այդ հետաքննությանը:

10.1.5. Անհապաղ, տեղեկացման փաստը ֆիքսող եղանակով, տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական դեպք տեղի ունենալու առնչությամբ իրեն ներկայացված գույքային բնույթի բոլոր պահանջների մասին:

10.1.6. Առանց Ապահովագրողի համաձայնության կամավոր կերպով չընդունել դեպքի հետ կապված պահանջներ, իր վրա չվերցնել ոչ մի պարտականություն նշված պահանջների կարգավորման համար, ինչպես նաև չհատուցել պատճառված վնասը:

10.1.7. Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցում վճարելու մասին դիմում, ինչպես նաև սույն ենթակետում նշված փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները՝

ա) ապահովագրության պայմանագիր (ապահովագրության վկայագիր),

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

բ) փաստաթղթեր, ապահովադիրին (ապահովագրված անձին) ներկայացված հայտերի պատճեններ, դատարանի վճիռներ, դեպքին առնչվող այլ փաստաթղթեր,

գ) փաստաթղթեր, որոնք հավաստում են Ապահովադրի (Ապահովագրված անձի) կրած վնասների մեծության չափը՝ կապված պարտապանին կամ պարտատիրոջը վնասի հատուցման պահանջի հետ:

10.2. Եթե Ապահովադիրին Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.1.1. ենթակետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

10.3. Ապահովագրական հատուցման վճարման դիմումի և 10.1.7 կետում նշված փաստաթղթերի ստացման փաստը, հաստատվում է Ապահովագրողի լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան գրանցում կատարելու միջոցով:

10.4. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել սույն գլխում նշված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև չպահանջել Ապահովադրից (Ապահովագրված անձից) այնպիսի փաստաթղթեր, որոնց առկայության հանգամանքն ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հաստատված է իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերով:

10.5. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, եթե հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները, վերջիններիս բացակայությունը անկարելի է դարձրել ապահովագրական դեպքի տեղի ունենալու փաստի և վնասի չափի որոշումը:

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

11.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի ճանաչման դեպքում Ապահովագրողը Շահառուին իրականացնում է ապահովագրական հատուցում սնանկության գործին մասնակցող անձին պատճառված վնասի չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրում մեկ դեպքի համար Ապահովագրողի կողմից սահմանված հատուցման ենթակա առավելագույն չափը (ապահովագրական գումարի ենթալիմիտի չափը):

Եթե Պայմանագրով մեկ ապահովագրական պատահարի համար սահմանված չէ հատուցման ենթակա առավելագույն չափ, ապա ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կողմից այն փաստաթղթերի հիման վրա, որոնք հաստատում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափը:

11.2. Սնանկության գործին մասնակցող անձին պատճառված վնասի մեջ ներառվում են՝

11.2.1. Դատական մարմինների որոշումների համաձայն Ապահովադրի (Ապահովագրված անձի) վրա դրված ծախսերը՝ իր մասնագիտական գործունեության հետևանքով սնանկության գործին մասնակցող անձին հասցված վնասի չափով, այդ թվում նաև ծախսեր, որոնք պարտապանը կամ պարտատերը, ում շահերը խախտվել են, կատարել է կամ պարտավոր է կատարել իր խախտված իրավունքի վերականգնման համար:

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

11.2.2. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից վնասի չափերի փոքրացմանն ուղղված ծախսերը, որոնք պետք է հատուցվեն Ապահովագրողի կողմից, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի ցուցումները կատարելու համար: Այդ ծախսերը հատուցվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2.3. Դատական մարմիններում ապահովագրական պատահարի հետ կապված գործի վարման համար Ապահովադրի (Ապահովագրված անձի) կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումների համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ և եթե այդ ծախսերի փոխհատուցումը նախատեսված է Պայմանագրով:

11.2.4. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից կատարված ողջամիտ և նպատակային ծախսեր, որոնք կատարված են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների և պատճառների նախապես որոշման նպատակով:

11.3. Կանոնների 11.2.1. ենթակետում սահմանված դեպքերում ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես Շահառուին՝ կանխիկ կերպով կամ նրա հաշվին փոխանցմամբ՝ համաձայն Շահառուի կողմից ներկայացված վավերապայմանների:

11.4. Կանոնների 11.2.2., 11.2.3. և 11.2.4 կետերում սահմանված դեպքերում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):

11.5. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը հավաստող փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոջընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

11.6. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

11.7. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

11.8. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ վնասի չափի որոշման համար նշանակել իր ներկայացուցչին: Տարաձայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետների կողմից:

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Այս դեպքում փորձաքննության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

11.9. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):

Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

11.10. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

11.11. Ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվ է համարվում՝

ա) կանխիկ հաշվարկների դեպքում՝ Շահառուի կողմից Ապահովագրողի դրամարկղից դրամական միջոցների ստացման օրը,

բ) անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվից Շահառուի հաշվարկային կամ անձնական հաշվին դրամական միջոցների ելքագրման օրը:

11.12. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունը պատճառված վնասի նկատմամբ ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում այն չափով, որքանով որ Ապահովագրողի Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համամասնական է ապահովագրության բոլոր պայմանագրերով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարների հանրագումարին:

Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրության բոլոր գործող պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրական ռիսկերը և ապահովագրական գումարների չափը:

11.13. Եթե տուժած անձին (անձանց) պատճառված վնասը, բացի Ապահովադրից (Ապահովագրված անձից) ենթակա է հատուցման նաև վնասի հասցման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է միայն ապահովագրական պատահարի հետևանքով հատուցման ենթակա լրիվ գումարի և այդ պատասխանատու անձանցից գանձման ենթակա գումարի տարբերությունը:

Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այդպիսի անձանց գոյության և նրանցից գանձման ենթակա գումարների չափերի մասին:

11.14. Ապահովագրավճարի տարաժամկետ (մաս-մաս) վճարման դեպքում՝ Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարից պահվում է հերթական չվճարված ապահովագրավճարի չափը:

Ապահովագրական հատուցման գումարից չի պահվում չվճարված հերթական ապահովագրավճարի մեծությունը, եթե մեկ ապահովագրական պատահարով

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման գումարն ավելի քիչ է, քան չվճարված ապահովագրավճարի չափը:

11.15. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական հատուցման գումարից մասհանվում է նաև ոչ պայմանական չհատուցվող գումարը (երրորդ անձանց գույքին վնաս պատճառելու դեպքում):

11.16. Կանոնների 10.1.1. և 10.1.5. ենթակետերով նախատեսված Ապահովադրի պարտականությունների չկատարումն իրավունք է տալիս Ապահովագրողին մերժել ապահովագրական հատուցումը, եթե չի ապացուցվում, որ Ապահովագրողը ժամանակին տեղեկացվել է ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին կամ որ Ապահովագրողի մոտ այդ տեղեկատվության պակասն ազդել է ապահովագրական հատուցման վճարման իր պարտականության վրա:

11.17. Ապահովագրողն ազատվում է Կանոնների 10.1.2. կետով նախատեսված Ապահովադրի պարտականությունների չկատարման հետևանքով առաջացած լրացուցիչ վնասների համար ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունից:

11.18. Ապահովագրողն իրավունք ունի երկարացնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե՝

ա) նշանակված է լրացուցիչ փորձաքննություն պատահարի հետևանքով առաջացած վնասի մեծության որոշման նպատակով: Այս դեպքում ապահովագրական հատուցման գումարը վճարվում է վնասի մեծության չափը պարզելու օրվանից հետո՝ Կանոններով սահմանված ժամկետներում:

բ) պատահարի փաստի առիթով հարուցված է քրեական գործ: Այս դեպքում ապահովագրական հատուցման գումարը վճարվում է իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ Կանոններով սահմանված ժամկետներում:

ԲԱԺԻՆ 12. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

12.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք

**ՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնագերծումից) պաշտպանությունը:

12.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և (կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությամբ համապատասխան:

12.3. Կետ 12.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

12.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

12.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 12.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ) ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

13.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

13.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

ԲԱԺԻՆ 14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի կողմերից ոչ մեկն իրավունք չունի Կանոններով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ Կողմի, առանց Պայմանագրի մյուս Կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ Ապահովագրողի կողմից վերաապահովագրական գործառնություններից:

14.2. Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից հայտնված տվյալների ճշտության համար և պարտավորվում են տեղեկացնել միմյանց այդ տվյալներում կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին:

14.3. Կանոններով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

14.4. Բոլոր հայցերը և դիմումները, որոնք Պայմանագրի կողմերն ուղղում են իրար, պետք է իրականացվեն գրավոր ձևով:

14.5. Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: